ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԺՆԵՎՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 23-25–ը Ժնևում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) Կենտրոնական գրասենյակում, ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի՝ գլխավոր ասամբլեայի նախապատրաստական նստաշրջանից հետո տեղի ունեցավ Էկումենիկ պաշտոնյաների հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցում էին ավելի քան 14 ներկայացուցիչներ՝ Աֆրիկայի, Ասիայի, Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Մերձավոր Արևելքի և Լատինական Ամերիկայի Երկրների Ուղղափառ և Բողոքական Եկեղեցիներից:

Այդ հանդիպմանը Հայ Առաքելական Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբղ. Մանուկյանը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ Գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը:

Ներկա հանդիպման նպատակն էր հորդորել էկումենիկ պաշտոնյաներին՝ սրանձնել իրենց վերապահված դերը և լծվել 9-րդ ասամբլեայի նախապատրաստական աշխատանքներին: Այս նպատակով 2004 թ. հունիսին տեղի ունեցած հանդիպումից հետո որոշվեց հաջորդ հանդիպումը կայացնել անմիջապես ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի փետրվարյան նիստից հետո:

Հանդիպումների ընթացքում ժողովականներն անդրադարձան ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքներին, Էկումենիկ պաշտոնյաների դերին ԵՀԽ 9-րդ Գլխավոր Ասամբլեայի ընթացքում և այլ տարածաշրջանային էկումենիկ խնդիրների: Ժողովականները հատկապես ուշադրություն դարձրեցին և հնարավորություն ունեցան բարձրացնելու իրենց հուզող հարցերը՝ կապված 9-րդ Գլխավոր Ասամբլեայի հետ, և պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա աշխատանքների շուրջ:

Հարկ է ավելացնել, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն իր հիմնադրման օրվանից կարևոր տեղ է հատկացրել Էկումենիկ պաշտոնյաներին: Էկումենիկ պաշտոնյաների դերն ինչպես ԵՀԽ-ի կյանքում, այնպես էլ էկումենիկ շարժման մեջ առավել զորանում է այսօր: Էկումենիկ պաշտոնյաներն ունեն իրենց կայքէջը, հաղորդակցվելու ինտերնետային հնարավորություններ, ինչպես նաև համընդհանուր քննարկումներ իրականացնելու ու կարծիքներ փոխանակելու լայն հնարավորություն:

2004 թ. հունիսին կայացած էկումենիկ ծառայողների հանդիպման ընթացքում ԵՀԽ Գլխավոր Քարտուղարությունը պաշտոնյաներին ընդունել է որպես Խորհրդական մարմին թե՛ ԵՀԽ գործունեության ընթացքում և թե՛ Եկեղեցիների հետ հարաբերություններում՝ ԵՀԽ «Եկեղեցի և Էկումենիկ հարաբերություններ» բաժնի միջոցով:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին